

ՓՈՒՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔՈՒՄ
(«No» անբայ արտահայտության օրինակով)

Շ. Հ. ՊԱՐՈՆՅԱՆ

Ինչպես հայտնի է, խոսքային իրողությունների տեսության հիմնադիրների՝ Ջ. Օսթինի, Ջ. Սերլի և Փ. Սթրոտսի¹ գիտական պրպտումների շնորհիվ ընդլայնվեց ասույթի հաղորդակցական-իմաստային կառուցվածքը՝ ընդգրկելով ոչ միայն ստորոգման բովանդակությունը՝ ասույթի նշանակությունը (proposition, նախադրույթ)², այլև հաղորդակցական բովանդակությունը՝ իմաստը, այսինքն՝ խոսողի հաղորդակցական նպատակը կամ միտումը (intention, դիտավորություն): Դրա շնորհիվ բացահայտվեցին մի շարք կարևոր արտալեզվական գործոններ՝ իլոկուտիվ իրողությունը (illocutionary act, կատարողական ակտ) և պերլոկուտիվ իրողությունը (perlocutionary act, խոսողական-ներգործական ակտ), որոնք լեզվական գործոնի՝ լոկուտիվ իրողության (locutionary act, խոսողական ակտ) հետ միասին ասույթի եռատարր ամբողջությունն են կազմում³:

Մեր դարի 80-ական թվականներին գործարանական լեզվաբանության շրջանակներում զարգացավ մի նոր ուղղություն՝ փոխներգործության տեսությունը (Interaction Theory), որի խնդրո առարկան, ի տարբերություն խոսքային իրողությունների տեսության (Speech Act Theory), ոչ թե առանձին ասույթներն են, այլ ասույթների հարակցությունը՝ երկխոսությունը: Փոխներգործության տեսության շնորհիվ էլ ավելի ընդլայնվեց ասույթի իմաստային կառուցվածքը, նրանում հայտնաբերվեց և ս մի իմաստային արտալեզվական տարր՝ ասույթի փոխներգործական (interactional) ոլորտը: Վերջինս դրսևորվում է կապակցված խոսքում՝ ապահովելով իրար հաջորդող ռեպլիկների համաձայնեցված հարակցությունը: Նոր իմաստային տարրը ստացավ փոխներգործական իրողություն անվանումը⁴:

Փոխներգործական իրողությունը, որպես խոսքային գործունեության ձև, արտացոլում է ասույթի այն արտալեզվական մակարդակը, որն արտահայտում է լեզվական նշանների սոցիալական իմաստավորությունը (հարցում, գործողություն կատարելու դրդում, հաստատում, ժխտում և այլն):

Մույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել փոխներգործական իրողության սոցիալական իմաստավորության դրսևորման ձևերից մի քանիսը: Մենք հիմնականում կանդրադառնանք խոսքային գործունեության իլոկուտիվ (illocutionary) և փոխներգործական ոլորտներին: Ուսումնասիրությունը մկիրված է երեք տարբեր փոխներգործական իրողությունների՝ ժխտում, մերժում և անհամաձայնություն: Ըստ որում, ասույթի իլոկուտիվ մակարդակում այս երեք իրողություններն էլ արտահայտվում են միևնույն իլոկուտիվ իմաստավորումով (illocutionary force)՝ հավաստող ասույթի օգնությամբ, տվյալ դեպքում՝ «No» հավաստող ասույթի:

¹ St' u J. L. Austin, How to Do Things with Words. - Cambr. (Mass.) 1968; J. R. Searle, Speech Acts: An Essay in the Philosophy of Language. - Cambr. 1970; P. Strawson, Intention and Convention in Speech Acts // Logicolinguistic Papers, London, 1971:

² Զանի որ գործարանական լեզվաբանությանն առնչվող որոշ եզրույթներ դեռևս ճշգրտված չեն այլ լեզվաբանական գրականության մեջ, այդ պատճառով տալիս ենք դրանց անգլերեն կամ ռուսերեն համարժեքները: Տե՛ս Ա. Նազարյան, Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Երևան, 1993:

³ St' u T. A. Dijk, Studies in the Pragmatics of Discourse, The Hague, 1981:

⁴ St' u W. Edmondson, Spoken Discourse, London, 1981:

«No» ասույթի գործաբանական դրսևորումները ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է նախ և առաջ տալ դրա իմաստային, կառուցվածքային (քերականական), ինչպես նաև գործառական (ֆունկցիոնալ) նկարագիրը:

Ինչ վերաբերում է «No» ասույթի ընդհանուր իմաստային նկարագրին, այն կարելի է մեկնաբանել որպես բացասում:

Ըստ քերականական հատկանիշների, «No» ասույթը, որն ունի ոչ լրիվ շարահյուսական կառուցվածք, համարվում է թերի: Թերի ասույթը, ինչպես գիտենք, անվանման (НОМИНАЦИЯ) սոված ձև է և առաջանում է հաղորդակցական տարրերից մեկի առանձնանալու և ինքնուրույն ձև դառնալու հետևանքով: Հաղորդակցական լեզվաբանության մեջ այս երևույթը կոչվում է առանձնացման հոգեբանական գործընթաց (психологический процесс вычленения)⁵:

Հաղորդակցական որևէ տարրի կարևորությունը շեշտելու նպատակով այն առանձնացվում է նախադասության մյուս մասից և խոսքում ստանում ինքնուրույն կիրառության հնարավորություն:

Ինչպես տեսնում ենք, հաղորդակցական առումով «No» ասույթը միանգամայն ինքնուրույն է, և այդ պատճառով էլ նախադասության տեսության մեջ այն ստացել է բառ-նախադասության կարգավիճակ: Բառ-նախադասությունները այնպիսի լեզվական նշաններ են, «որոնք անվանում են ոչ թե իրականության տարրերը, այլ որոշակի գործառույթներ, որոնք տեղ են գտնում հաղորդակցման գործընթացում»⁶:

Նախադասության տեսության մեջ ընդունված է նաև «No» ասույթը անվանել անբայ արտահայտություն, այսինքն՝ ասույթ, որն իրագործում է հաղորդակցական խնդիրը առանց բայի դիմավոր ձևերի⁷:

Այն դեպքում, երբ «No» անբայ արտահայտությունը հանդես է գալիս օժանդակ բայի հետ միասին (օրինակ՝ «No, I didn't»), իրենից մերկայացնում է երկմաս մտածական կառուցվածք, որում դրսևորվում է պատասխան տվողի ակտիվությունը: Պատասխան ռեպլիկը կառուցվում է թեմայի («No») և ռեմայի («I didn't») հաղորդակցական հակադրումով: Ըստ որում, և՛ թեմայի, և՛ ռեմայի գործառական իմաստը մեկն է՝ կեղծության, ստության տրամաբանական-իմաստային տարրը, սակայն այդ իմաստը արտահայտված է տարբեր միջոցներով՝ բառային՝ «No» և շարահյուսական՝ «I didn't»:

Ինչպես արդեն նշեցինք, հաղորդակցական տեսանկյունից «No» անբայ արտահայտությունը միանգամայն ինքնուրույն է, այն ազատ կիրառվում է խոսքում: Մակայն պետք է ասել, որ այդ ինքնուրույնությունը, ինչպես նաև ցանկացած խոսքային միավորի ինքնուրույնությունը, հարաբերական է:

Բանն այն է, որ բնական, կապակցված խոսքում՝ երկխոսության կառուցվածքում, գրուցակիցների ասույթները փոխկապակցված են: Այսպես, առօրյա երկխոսություն-գրույցը բնորոշվում է կարճ ռեպլիկների արագ հերթափոխով, որոնցից յուրաքանչյուրը հետևում է մյուսին, և կարծես թե մեկը մյուսին ծնունդ է տալիս: Ասույթների փոխադարձ կապը ակնառու է նախ և առաջ հաղորդակցման գործընթացի գործառական մակարդակում ռեպլիկազդակ և ռեպլիկ-արձագանք հաղորդակցական զուգադրումով⁸:

Ռեպլիկ-ազդակը սկսում է հաղորդակցման գործընթացը, իսկ ռեպլիկ-արձագանքը վերջինիս պատասխանն է և լրացնում է նրան: Այս երկու ռեպլիկների հարակցությունը, որը գործաբանական լեզվաբանության մեջ ընդունված է անվանել երկխոսական միություն⁹, համարվում է խոսքային գործունեության նվազագույն միավորը¹⁰:

⁵ Տե՛ս Լ. Ս. Чехоян, Синтаксис английской диалогической речи, М., 1979, И. Н. Горелов, Проблема функционального базиса речи. Автореф. докт. дис., М., 1977:

⁶ Լ. Ս. Чехоян, նշվ. աշխ., էջ 73:

⁷ Տե՛ս Լ. Ս. Чехоян, նշվ. աշխ., էջ 68:

⁸ Տե՛ս Н. Д. Арутюнова, О типах диалогического стимулирования, Теория и практика описания разговорной речи, Горький, 1972, էջ 3-5:

⁹ «Диалогическое единство» (կամ «adjacency pair»). Տե՛ս И. П. Сусов, Коммуникативно-прагматическая лингвистика и ее единицы, Прагматика и семантика синтаксических единиц, Калинин, 1984, էջ 3-12: E. Goffman, Replies and Responses // Language in Society, 1975, Vol. 5, էջ 257-313:

¹⁰ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, փոխներգործության տեսության մեջ ընդունված է նվազագույն լեզվական միավոր համարել ոչ թե բառը, բառակապակցությունը, ասույթը (նախադասությունը) կամ ռեպլիկը (որը, ի դեպ, իր հերթին կարող է կազմված լինել մի բառի ասույթների հարակցությունից), այլ երկու գրուցակիցների ռեպլիկների հարակցությունը: Իսկ խոսքային գործունեության մաքսիմալ միավորը համարվում է ամբողջ երկխոսությունը՝ սկզբից մինչև վերջ:

Ըստ իր գործառնական հատկանիշների՝ անբայ արտահայտությունն արձագանքող ռեպլիկ է: Գործարանական լեզվաբանության մեջ բազմիցս նշվել է, որ հատկապես հարցում արտահայտող երկխոսական միավորի կազմում արձագանքող ռեպլիկը սովորաբար արտահայտվում է թերի նախադասությամբ¹¹: «No» թերի ասույթը քերականական, իմաստային, գործարանական կապերով հարակցվում է ռեպլիկ-ազդակին և վերջինիս հետ միասին կազմում է խոսքային գործունեության մեկ միավոր՝ երկխոսական միություն:

Եթե «No» անբայ արտահայտությունը դիտենք ավանդական նախադասության տեսության տեսանկյունից, ապա կարող ենք ասել, որ վերջինս ունի պատմողական նախադասության կառուցվածք: Իսկ եթե այն դիտենք ժամանակակից շարահյուսական գործառնության՝ հաղորդակցական-գործարանական դրևերման տեսանկյունից (այսինքն՝ իլոկուտիվ իմաստավորման տեսանկյունից), ապա կարող ենք ասել, որ «No»-ն հաստատական ասույթ է և դասվում է հավաստող ասույթների շարքը:

«No» անբայ արտահայտության լեզվական նկարագիրը կիսատ կմնա, եթե չուսումնասիրենք վերջինիս դրևերմաները կապակցված խոսքում՝ երկխոսական միության կազմում: Այստեղ արդեն երևան է գալիս խոսքային իրողության համար մի շատ կարևոր իմաստային ոլորտ՝ փոխներգործական մակարդակը:

Թեև փոխներգործական մակարդակն ունի արտալեզվական՝ սոցիալական վերաբերում, այն դրևերմում է խոսքային գործունեության գործընթացում և ծառայում է որպես ասույթների հարակցման միջոց:

Այսպիսով, փոխներգործության տեսության շրջանակներում կատարվող հետազոտությունները թույլ տվեցին հայտնաբերել խոսքային գործունեության կապը հասարակական գործունեության հետ: Ըստ որում, ասույթը դիտվում է որպես երկու իրողությունների՝ իլոկուտիվ և փոխներգործական, համատեղ իրագործում: Եթե իլոկուտիվ մակարդակում արտացոլվում է խոսող անհատի դիտավորությունը (intention), ապա փոխներգործական մակարդակում արտացոլվում է վերջինիս կատարած սոցիալական գործունեության տիպը: Այսինքն՝ թե սոցիալական ինչ գործողություն է կատարում խոսող անհատը լեզվական նշանների միջոցով:

Խոսքային գործունեության փոխներգործական մակարդակի, ինչպես նաև փոխներգործական իրողությունների բացահայտումը մեծ կարևորություն ունեն նախ և առաջ առօրյա երկխոսության դիմամիզմը հասկանալու գործում: Պարզ դարձավ, որ խոսքի մեջ իրար հաջորդող ասույթների կապը իրականացվում է նախ և առաջ փոխներգործական մակարդակում, այսինքն՝ արտալեզվական ոլորտում, որն անցվում է լեզվական նշանների միջոցով կատարվող սոցիալական գործունեությանը:

Ինչպե՞ս կարելի է սահմանել փոխներգործական իրողությունները, որոնք արտալեզվական ոլորտին պատկանելով հանդերձ, չափազանց կարևոր դեր են խաղում խոսքային գործունեության մեջ, ասույթների հարակցման գործում: Կարելի է ասել, որ փոխներգործական իրողությունները այնպիսի երկխոսական տարրեր են, որոնք ունեն սոցիալական իմաստավորում և կարևորություն: Փոխներգործական իրողությունը՝ որպես ասույթի յուրահատուկ իմաստային տիրույթ, ապահովում է ռեպլիկների կապակցվածությունը հասարակական գիտակցության մեջ ընդունված և ամրացված սոցիալական սահմանափակումների, նորմերի միջոցով¹²: Այդ սահմանափակումները վերաբերում են նախ և առաջ խոսելու գործընթացում փոխներգործական իրողությունների հաջորդականությանը¹³:

Այսպես, եթե ես հարցում եմ արտահայտում (որը, ի դեպ, համարվում է որպես սոցիալական գործունեության ձև), ապա ակնկալում եմ, որ դրան հաջորդող պատասխանը պետք է լինի հաղորդում և ոչ թե մեկ ուրիշ հարցում կամ էլ ինչ-որ գործողություն կատարելու հորդոր¹⁴:

¹¹ Տե՛ս *Л. П. Чахоян*, К вопросу о функциональной типологии безглагольных высказываний, "Вестник Ленингр. ун-та", 1978, N 20:

¹² Տե՛ս *W. Edmondson*, նշվ. աշխ.:

¹³ Սոցիալական նորմերի մի խումբ էլ կարգավորում է խոսելու գործընթացը կարգախոսների միջոցով, որոնք վերաբերում են խոսքային գործունեության քանակին, որակին, տեղին կամ քաղաքավարի լինելուն: Տե՛ս *H. P. Grice, Logic and Conversation // Syntax and Semantics*. N. Y., 1975, Vol. 3, էջ 41-48:

¹⁴ Բոլորին է հայտնի, որ հարցին հարցով չեն պատասխանում: Այս կանոնը առավել կարևոր է փոխներգործական մակարդակում:

Այժմ փորձենք նկարագրել «No» անբայ արտահայտության դրևորած ընդհանուր իմաստը փոխներգործական ոլորտում: Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ վերջինս արտահայտում է խոսողի ապրումները, ներքին մտորումները ինչ-որ փաստերի վերաբերյալ, հաղորդում է կատարում օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող երևույթների, փաստերի մասին կամ էլ արտահայտում է խոսողի գործելակերպը: Ըստ այդմ, փոխներգործական մակարդակում «No»-ն կատարում է հետևյալ գործառույթները. 1. ստուրջան (կեղծության) հաստատում, 2. մերժում, 3. անհամաձայնություն:

Խոսքային գործունեության մեջ այս դրևորումները հանդես են գալիս որպես փոխներգործական իրողություններ և բնորոշ են տարբեր տիպի երկխոսական միավորների: Այսպես, կեղծության հաստատման գործառույթը բնորոշ է հարցական խոսքային իրադրությանը, երբ խոսքը վերաբերում է մի որոշակի դատողության, փաստի իսկության կամ ստուրջան հաստատմանը:

Մերժման գործառույթը բնորոշ է այն խոսքային իրադրություններին, երբ խոսակիցներին մեկին ինչ-որ բան է առաջարկվում: Անհամաձայնության գործառույթը բնորոշ է քննարկման տիպի երկխոսություններին, երբ ինչ-որ կատարվելիք գործողություն է քննարկվում:

Հարկ է նշել նաև, որ «No» անբայ արտահայտությունը կիրառվում է ինչպես համագործակցող (cooperative), այնպես էլ կոնֆլիկտային, վիճային (contradictory) տիպի երկխոսություններում, որտեղ գրուցակիցների միջև առկա է հակադիր տեսակետների բախում:

Ուսումնասիրենք «No» անբայ արտահայտության փոխներգործական դրևորումները ըստ վերը նշված խոսքային իրադրությունների՝ առաջարկ, հարցում և քննարկում (կամ հանդում):

Առաջարկի արժեքականություն ունեցող երկխոսական միություններում, որտեղ «No» հավաստող ասույթը կատարում է մերժման դեր, առաջնային է խոսողի կամքը: Նրա ռեպլիկը առաջարկ, հրավեր կամ էլ խնդրանք է արտահայտում: Փոխներգործական մակարդակում այս իրկուտիվ իրողությունը մեկնաբանվում է որպես դրդում: Սակայն պետք է ասել, որ խոսողը գրուցակցին դրդում է այնպիսի գործողության, որը, ըստ իրեն (այսինքն՝ խոսողի), բխում է գրուցակցի շահերից, օգտակար կամ անհրաժեշտ է նրան: Խոսողի դրդումին խոսակիցը պատասխանում է մերժումով՝ «No»: Որպես սոցիալական գործունեություն՝ մերժել նշանակում է չընդունել ինչ-որ բան, դիմադրել: Մերժելով՝ խոսակիցը ցույց է տալիս, որ չի ընդունում այն, ինչ իրեն առաջարկվում է, չի հնազանդվում խոսողի կամքին, չի ցանկանում բավարարել խնդրանքը: Քանի որ մերժման էությունը, ինչպես տեսնում ենք, չընդունելն է, ապա այն պարունակում է բացասական հաղորդակցական իմաստային տարր:

Մեր դիտարկումները թույլ են տալիս ենթադրելու, որ մերժումը կարող է հանդես գալ հետևյալ հաղորդակցական իրադրություններում. 1) խոսակիցը չի ընդունում խոսողի խնդրանքը, առաջարկը կամ օգնությունը, 2) խոսակիցը չի ցանկանում ընդունել այն, ինչ առաջարկվում, տրվում է իրեն, 3) խոսակիցը չի ցանկանում անել այն, ինչ իրենից խնդրում են, 4) խոսակիցը չի ցանկանում տալ այն տեղեկատվությունը, որն իրենից խնդրում են:

Օրինակ՝

«I may drive to Ebstadt later», Clay said, «They got a dance. It'll probably last till around two. Wanna go?»

«No, thanks».

Խոսակիցը մերժում է խոսողի առաջարկը, չի ընդունում նրա հրավերը («No, thanks»):

Հետևյալ երկխոսությունում խոսակիցը մերժում է իրեն առաջարկված խմիչքը.

«Bresley pushed the bottle towards David. «Cognac? Calvados?»

«No, thanks».

Հետևյալ երկխոսության մեջ խոսողը խնդրում է խոսակցին իրեն տալ գաղտնի տեղեկություն՝ հավաստիացնելով, որ այդ գաղտնիքը չի բացահայտվի, սակայն խոսակիցը չի համաձայնում հայտնել իր իմացածը.

«Why won't you tell me how he was killed? I swear I won't tell anybody. Honestly. Please».

«No».

Ինչպես արդեն ասացինք, իր յուրահատուկ իմաստային կառուցվածքի շնորհիվ, մերժումը պարունակում է բացասական հաղորդակցական լիցք: Այս առումով անհրաժեշտ է

դառնում տարանջատել մերժումը և մեկ այլ փոխներգործական իրողություն, որը դարձյալ պարունակում է բացասական լիցք՝ ժխտումը:

Ժխտումը հաստատումն է այն բանի, որ ինչ-որ բան ճիշտ չէ: Հետևաբար, ժխտումը, ի տարբերություն մերժումի, վերաբերում է խոսքային իրադրության կոնցեպտուալ, գաղափարային ոլորտին: Ժխտումը վերաբերում է գաղափարներին, ենթադրություններին, խորհրդրածություններին ու մտածմունքներին, որոնք կարող են լինել ճիշտ կամ սխալ:

Ժխտումը և մերժումը տարբերվում են իրարից նաև այն հաղորդակցական իրադրություններով, որոնցում նրանք դրսևորվում են: Ժխտումը հանդես է գալիս հարցում արտահայտող, տեղեկություն հայցող խոսքային իրադրություններում, երբ սկզբնական ռեպլիկում (որը, ի դեպ, դարձյալ հարցական ասույթով է արտահայտված) պահանջ է դրվում հաստատելու որոշակի դատողության, փաստի իսկությունը: Այստեղ «No» արձագանքող ռեպլիկը դրևորվում է որպես փաստի ստության հաստատում՝ արտահայտելով ստության տրամաբանական-իմաստային տարրը¹⁵: Որպես խոսքի սոցիալական գործունեության ձև, այսպիսի խոսքային գործողությունը համարվում է ժխտում «S-ը պատասխանեց բացասական արժեքով»:

Հարկ է նշել, որ ժխտումը նախ և առաջ մտքի տրամաբանական գործողություններից մեկն է, որը հակառակ հարաբերությամբ է կապված սկզբնական դատողության հետ: Ժխտման միջոցով «տվյալ ասույթից առաջանում է մի այնպիսի ասույթ, որ եթե ելակետային ասույթը եղել է ճշմարիտ, ապա նրա ժխտումը կեղծ է, իսկ եթե այն եղել է կեղծ, ապա նրա ժխտումը ճշմարիտ է»¹⁶:

Եթե փորձենք նկարագրել ժխտումը որպես լեզվական գործողության ձև, ապա կարելի է տալ հետևյալ մեկնաբանությունը. «Ժխտել, նշանակում է ասել, որ ինչ-որ բան ճիշտ չէ»¹⁷:

Ժխտումը լեզվաբանության մեջ նաև քերականական կարգ է, որն ունի երկու դրսևորում. 1) մասնավոր ժխտում, երբ ժխտումը վերաբերում է ասույթի մի որոշակի տարրի, 2) ընդհանուր ժխտում, երբ նշվում է օբյեկտի և հատկանիշի միջև եղած կապի բացակայությունը: Օրինակ.

«Hello? Lee? Were you asleep?»

«No, no»

Այստեղ խոսակիցը ժխտում է հարցական ասույթի ստորոգման բովանդակության իսկությունը:

Այսպիսով «No» ասույթի միջոցով կատարվող ժխտումը հանդես է գալիս որպես ընդհանուր ժխտում:

Ժխտում գործառույթով «No» ասույթը հանդես է գալիս այն հարցական երկխոսություններում, որոնք պարունակում են ստուգող, ինքնությունը պարզող ռեպլիկ-ազդակ, ինչպես օրինակ, նախորդ երկխոսական միավորման մեջ՝ «Were you asleep?»:

Իսկությունը պարզող հարցական նախադասությունների նպատակն է՝ հաստատել որևէ փաստի ճշմարիտ լինելը:

Հատկանշական է նաև, որ ժխտում գործառույթը հանդես է գալիս համագործակցող բնույթի երկխոսական միավորներում, որտեղ չեն բախվում գրուցակիցների տեսակետները, շահերը և, հետևաբար, չկա կոնֆլիկտային իրադրություն, որն, ի դեպ, դեպքերի որոշակի զարգացումով, կարող է հանգեցնել խոսքակովի, վիճաբանության:

«No» հավաստող ասույթի երրորդ փոխներգործական դրսևորումը անհամաձայնությունն է: Այս գործառույթը դրսևորվում է համոզում արտահայտող խոսքային իրադրություններում, երբ քննարկվում է ինչ-որ գործողություն կատարել-չկատարելու հարցը: Ըստ որում, տվյալ գործողության կատարումը բխում է խոսողի շահերից, կախված է նրա կամքից և կարող է չհամապատասխանել խոսակցի շահերին: Այդ պատճառով ռեպլիկ-ազդակի միջոցով խոսողը դրդում է իր խոսակցին կատարելու մի գործողություն, որը նա՝ խոսողը համարում է խելամիտ կամ ճիշտ:

¹⁵ Տե՛ս *Л. П. Чахоян, Синтаксис английской диалогической речи, т. 2*: 48:

¹⁶ «Փիլիսոփայական բառարան», խմբ. *Մ. Ռոզենտալ*, Երևան, 1975:

¹⁷ *A. S. Hornby, Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, 1980, p. 231*:

Այստեղ բախվում են խոսակիցների շահերը, քանի որ ռեպլիկ-արձագանքում երկրորդ գրուցակիցը չի համաձայնում իրագործելու խոսողի կամքը՝ այն համարելով անընդունելի կամ սխալ:

Որպես իրկուտիվ իրողություն, ռեպլիկ-ազդակը սովորաբար հրաման է արտահայտում: Որպես փոխներգործական իրողություն՝ խոսողը դրդում է խոսակցին ինչ-որ բան անելու կամ դադարեցնելու արդեն կատարվող գործողությունը, փոխել իր վարքագիծը: Օրինակ՝

«Dodge, tell Tilden not to go out in the back lot any more. I don't want him back there in the rain».

«No».

Ինչպես տեսնում ենք, խոսակիցը չի համաձայնում գործել խոսողի դրդմամբ, քանի որ համարում է դա սխալ, անընդունելի: Դիտենք մի այլ օրինակ.

«If you're bored go home. Your car's outside».

«No, I'm bored there too».

Եվ դարձյալ հրամանին հետևում է անհամաձայնություն արտահայտող հաստատական ասույթ, քանի որ տվյալ գործողության կատարումը չի բխում երկրորդ գրուցակցի շահերից:

«I forbid you to speak to him, do you hear?».

«No, I'll flippingly well speak to him. If I want to».

Խոսակիցը համաձայն չէ ենթարկվելու խոսողի կարգադրությանը, արգելքին: Սա էլ հանգեցնում է այն բանին, որ այս երկխոսական միավորման ընթացքում զարգանում է կոնֆլիկտային իրադրություն, քանի որ բախվում են գրուցակիցների շահերը: Ինչպես արդեն նշել ենք, երբեմն գրուցակիցների շահերի բախումը բերում է վիճաբանության: Առաջանում է երկխոսության մի յուրահատուկ տիպ՝ վեճ, որն ունի ծավալման իրեն բնորոշ դրսևորումները¹⁸:

Ուսումնասիրելով «No» ասույթի դրսևորումները կապակցված խոսքում, մենք կարող ենք եզրակացնել հետևյալը. որպես խոսքային գործունեության դրսևորում «No» անբայ արտահայտությունը ունի մեկ՝ հավաստող ասույթի գործառույթ: Որպես սոցիալական գործունեության դրսևորում, այն ունի երեք փոխներգործական գործառույթ՝ մերժում, ժխտում և անհամաձայնություն:

Փոխներգործական իրողության գործառույթները կապակցված խոսքում ուսումնասիրելիս՝ մեզ համար պարզ է դառնում, որ կապակցված խոսքում ասույթը ունի իր յուրահատուկ դրսևորումները, որոնք ի հայտ չեն գալիս առանձին, խոսքի ընդհանուր հոսքից կտրված ասույթների վերլուծության ժամանակ: Այդ դրսևորումները կարելի է դիտել որպես կապակցված խոսքի լեզվական մակարդակներ, որոնք խոսողի խոսքային և սոցիալական գործունեության դրսևորումներ են: Այս իմաստով կարևորվում է կապակցված խոսքի ուսումնասիրությունը և նրա իրկուտիվ իմաստավորման, ինչպես նաև փոխներգործական ուղղորտի արժեքավորումը:

Պ. Ա. ՓԱՐՈՆՅԱՆ - Բունկիոն Ինտերակցիոնալնոյ ակտա Ե Եվաչնոյ ըրչի (նա ըրմերը Եզլաղոլնոյ Եվկաչնոյանա "No"). - Ե Ետալը ըրսադրալոյալտա Ինտերակցիոնալնոյ ակտա, Եվաչալոյալտա օտրիցալոյալտա, օտկազ Ե նեոցլաղոլա Ե սոմոլոյալտա Եզլաղոլնոյ Եվկաչնոյանա "No". Եվաչնոյալտա Ետրուկտուրնո-Եեմանտիցալոյալտա Ե կոմունիկատիվնո-ըրաղմատիցալոյալտա օոսոբենոստի նեոլոնոյալտա կոնստալոյալտալոյալտա "No" Ե Ետրուկտուրնո մինիմալնոյ Եդինիցալոյալտա կոմունիկատիվնոյալտա ըրաղոլոյալտա Եդինստալոյալտա.

Ե Ետալը ըրոբրոն Եսսլեդոյալտա ըալկա Ե ըրեչեվոյալտա սիտուալոյալտա, Ե կոտորալտա ըրաչալոյալտա Եվաչնոյալտա Ենտերակցիոնալնոյ ակտա.

Իսսլեդոյալտա Եզլաղոլնոյ Եվկաչնոյանա "No" Ե Եվաչնոյ ըրչի ըրոզալոյալտա Եդելալոյալտա Եսլեդոյալտալոյալտա Ետրուկտուրնո-ըրեչեվոյալտա Եդելալոյալտա Եզլաղոլնոյ Եվկաչնոյանա "No" Եվաչնոյալտա կոնստալոյալտալոյալտա Եվկաչնոյանալոյալտա. Ե Ետրուկտուրնո կոմունիկատիվնո-սոցիալոյալտա Եդելալոյալտա, օնո Եվոլոնոյալտա ըրի Ենտերակցիոնալնոյ Եբունկիոնալտա Ետրուկտուրնոլոյալտա օտրիցալոյալտա, օտրիցալոյալտա Ե նեոցլաղոլալոյալտա.

¹⁸ Տե՛ս Պ. Ա. Փարոնյան, Դիաղոլիցալոյալտա Եդինիցալոյալտա Ելեոնաըրաղմոնոյ օոսոբալոյալտա ըրաղոլոյալտա-Եսօրոյ, «Բնիքեր Երկալոյալտա հիմալոյալտալոյալտա», 1991, N 3, էլ 171-175: